

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՄԻԿՐՈԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ  
ԱԿADEMİЯ NAUK ARMENSKOY SSSR  
MIKROBIOLOGICHESKIY SBORNİK

ՊՐԱՎ Բ

1946

ՎԱՐ. II

Հ. Կ. ՓԱԼՈՍՅԱՆ

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՏՈՐՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌՎՈՒՅՏԻ  
ՊԱԼՄԱՐԱԿՏԵՐԻՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ  
ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

(Նախնական հաղորդում)

Վերջին երեք տասնամյակների ընթացքում գյուղատնտեսական միկրոբուզիայի բնագավառում աշխատողները լայն հետազոտական բնույթի ուսումնասիրություններ են կատարել, հատկապես թիթեռնածաղկավոր բույսերի պալարաբակտերիաների մորֆոլոգիական և ֆիզիոլոգիական հատկանիշների սպեցիֆիկ կողմերի պարզաբանման ուղղությամբ: Եվ դա միանգամայն հասկանալի է, քանի որ հետազոտողները պալարաբակտերիաներն ուսումնասիրելու ընթացքում նրանց մոտ նկատում էին մորֆոլոգիական և ֆիզիոլոգիական այնպիսի բնորոշ ու սպեցիֆիկ կողմեր, որոնք այլ խմբի բակտերիաների մոտ երբեք էլ գոյություն չունեն:

Դրանք այնպիսի հատկանիշներ են, որոնք առաջին հայացքից հետազոտողի հետաքրքրությունն են շարժում և նրա ուշագրությունը զրավում: Այդ էր պատճառը, որ գիտնականները երկար ժամանակ տարբեր կազմ ունեցող սննդական յութերի վրա, դանական ուղղություններով, հետազոտում էին պալարաբակտերիաների մորֆոլոգիական հատկանիշների փոփոխությունները: Նրանք հատկապես մանրամասնորեն ուսումնասիրում էին պալարտրակտերիաների զարգացման ցիկլում առաջացող մորֆոլոգիական տարրեր ձևափոխությունները և վերջիններիս միմյանց նկատմամբ ունեցած հաջորդականությունը: Օրինակ՝ նրանք պարզում էին, թե պալարաբակտերիաները հողում ունեցած ձեից, պալարիկների մեջ անցնելիս, ի՞նչպես են փոխվում: Ինչպես նաև բակտերիաների տարրեր ձևափոխ լինչպիսի ակտիվություն և վիրուլինտություն գոյություն ունի: Անգամ ավելին՝ տարբեր կազմի աղուային սննդասության պայմաններում մանրամասն ուսումնասի-

բությունների շնորհիվ պարզվեցին թիթեռնածաղկավոր բույսերին և պալարաբակտերիաների փոխարաբերությունը: Աշխատություններ, որոնք անկասկած տեսական և գործնական մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Չնայած նրան, որ պալարաբակտերիաների յօւրահամառուկ մորֆոլոգիական և բիոլոգիական հատկանիշների վերաբերյալ հսկայական փորձնական մատերիալ է կուտակված, որոնք բավականին շատ բնորոշ կողմեր են լուսաբանում, պետք է խոստովանել, սակայն, որ հրշյալ աշխատանքների արդյունքներից բխող եզրակացությունների մեջ տարրեր հետազոտողների մոտ, մենք հաճախ հանդիպում ենք երկդիմի կարծիքների, որոնք ի հարկե, հաճախ վեճերի տեղիք են տալիս: Վեճերի առիթ է հանդիսանում մասնավորապես պալարաբակտերիաների ձեւերի փոփոխության ժամանակ արտաքին պայմանների ազդեցության դերը, որը դեռ իր ամբողջ մանրամասնությամբ պարզված չէ: Այդ արտաքին պայմաններից, հատկապես էկոլոգիական ֆակտորների նշանակության մասին մենք համարյա ոչ մի տեղեկություն չունենք: Մինչդեռ այդ հանգամանքը պալարաբակտերիաների ձևերի փոփոխման պրոցեսում վճռական նշանակություն ունի: Այստեղ, ի հարկե, տարրեր հողակլիմայական՝ պայմանները, թիթեռնածաղկավորների նեղ տեսակային սպեցիֆիկությունը, վերջինիս զարգացման ինտենսիվությունը, հողի մշակման սիստեմը, խոնավության ռեժիմը և այլն նույնպես խոշոր դեր են խաղում: Սակայն այդ կարևոր ֆակտորների ազդեցությունը, պալարաբակտերիաներն ուսումնասիրող գիտնականների ուշադրության շրջանակներից հաճախ հեռու են մնացել կամ անտեսվել են: Նրանք գըլխավորապես բավականացել են այն տվյալներով, որոնք ստացվել են լաբորատոր պայմաններում պատրաստված արհեստական սննդառու միջավայրերում:

Ինչպես հայտնի է, արհեստական պայմաններն իրենց կազմով խիստ տարրերվում են ընականինչ լատու միջավայրից, եթե պալարաբակտերիաները զարգանում են այդ երկու տիպի մննդանյութերի վրա, ապա տալիս են տարրեր մորֆոլոգիական և ֆիզիոլոգիական հատկանիշներ. այդ արտահայտվում է ոչ միայն տարրեր էկոլոգիական ֆակտորների ազդեցության տակ աճող միենույն թիթեռնածաղկավոր բույսի մոտ, անգամ նույն կուլտուրական բույսի զարգացման տարրեր փուլերում: Հատկանիշներ և երևոյթներ, որոնք մինչև օրս դեռ ճիշտ ու լրիվ լուսաբանված չեն:

Հայաստանի տարբեր հողակլիմայական պայմաններում առողջիթեռնածածակավոր բույսերի պալարաբակտերիաների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նրանք տարբեր մնջնդանյութերի վրա տալիս են իրարից խիստ տարբերվող մորֆոլոգիական և փիզիոլոգիական առանձնահատկություններ։ Այսաեղ, անկասկած, խոշոր նշանակություն ունեն Հայաստանի յուրահատուկ հողակլիմայական պայմանները, որոնք իրենց ընույթով խիստ խայտարգեան են։ Իսկ այդ խայտարգետությունն, անկասկած, խոշոր ազդեցություն է թողնում պալարաբակտերիաների ձևերի առաջացման ու վերջիններիս բիոլոգիական առանձնահատկությունների վրա։ Նկատի ունենալով այդ, մենք վերջին մի քանի տարիների ընթացքում ձեռնամուխ եղանք Հայաստանի տարբեր էկոլոգիական պայմաններում աճող, հատկապես թե վայրի և թե կուլտուրական առվույտի պալարաբակտերիաների մորֆոլոգիական և բիոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրության։

Այդ նպատակի համար առաջին հերթին ուսումնասիրության օրենքական դարձրինք՝ ա) Արարատյան դաշտավայրի, բ) Նախալեռնային գոտու, կոտայքի, գ) յածը լեռնային գոտու—Լեռնականի և դ) բարձր լեռնային գոտու Նորմայագետի շրջանների ջրովի ու մշակովի և անջրդի անմշակ հողերում աճող առվույտների պալարիկները, մեկուսացնելով նրանցից պալարաբակտերիաներ՝ վեգետացիայի շրջանում մի քանի անգամ, ինչպես նաև մեկուսացման ժամանակ միկրոսկոպիական հետազոտությունների ենթարկեցինք պալարիկներում աճող բակտերիաների մորֆոլոգիական ձևերը, Մեկուսացումներ կատարվեց վեգետացիայի շրջանում՝ երեք անգամ։ I մեկուսացումը գարնանը, երբ տերենները նոր էին սկսել աճել, II—ծաղկման ընթացքում, III—աշնանը՝ վեգետացիայի վերջում։

Առանձին շրջաններից և թե ինչքան ըույսից, որքան պակարաբակտերիաների շտամներ են մեկուսացվել, ցույց է տալիս ստորև տրվող № 1 աղյուսակի տվյալները։ Ինչպես տեսնում ենք այդ մեջբերումներից, տարբեր ժամանակներում մեր կողմէց հետազոտվել են մոտ 480—500 մշակովի և 300-ից ավելի անմշակ վայրի առվույտներ, որոնցից ավելի քան 800 շտամի բակտերիաներ են մեկուսացվել Նախ քան այդ շտամ-կուլտուրաների բնութագրմանն անցնելը կուզենայի տարբեր շրջաններում աճող վայրի և կուլտուրական առվույտների պալարիկնե-

**Առանձին օրգանիզմերում ուսումնափրկած վայրի ու կուլտուրական**

Դաշտական գույք	Մշակման ներշահան- դութիների	Մշակման ներշահան- դութիների	Մշակումը		Ուսումնական գույք	
			Բարձրությունը մակերևությունը	Մշակումը	Անժամկետ	Զբաղյական
Տափական գույք	Երկան	950—1050	+	—	—	—
	Եջմիածին	870	—	+	+	—
	Հակառամբերյան	865	—	—	—	—
Նախալեռնային	Կոստայք	1400—1450	+	—	+	—
Ճածր-լեռնային	Լեռինական	1335	—	+	—	—
Լեռնային	Նոր-Բայազեա	1960	—	—	+	—

րի ու նրանց մեջ բնակություն հաստատող պալարա-բակտերիաների մի քանի բնական առանձնահատկությունների հետ ծանոթացնել, նկատի ունենալով, որ դրանք իրենց հերթին նույնպես արդյունք են Հայաստանի տարբեր էկոլոգիական ֆակտորների ազդեցությանը և, որ կարևոր է, այդ առանձնահատկությունների մեջ ունենք թե պալարիկների և թե պալարաբակտերիաների միմիանցից խիստ տարբերվող մորֆոլոգիական և բի-

առվույների և Երանց մեկուսա պալատաքակենիաների օսամ. բինը  
Աղյուսակ № 1

Առվույների ամ աթպը	Գալուստների	Ամառը ծաղկման շրջանում	Վեգետացիայի վերջում
Կուլտուրական գույքը	Բնույթի բանակը	Բնույթի բանակը	Բնույթի բանակը
Մանր կալսավաղային հող	+	-	25
Ավաղային քարքարոսակավահող	-	+	60
Մանր կալսավային հող	+	-	30
Ավաղային քարքարոսակավահող	-	+	40
Մանր կալսավային հող	+	-	25
Ավաղային քարքարոսակավահող	-	+	25
Մանր կալսավային հող	+	-	30
Ավաղային քարքարոսակավահող	-	+	30
Մանր կալսավային հող	+	-	40
Ավաղային քարքարոսակավահող	-	+	18
Մանր կալսավային հող	+	-	20
Ավաղային քարքարոսակավահող	-	+	73
Մանր կալսավային հող	+	-	120
Ավաղային քարքարոսակավահող	-	+	70
Մանր կալսավային հող	+	-	18
Ավաղային քարքարոսակավահող	-	+	18
Մանր կալսավային հող	+	-	22
Ավաղային քարքարոսակավահող	-	+	60
Մանր կալսավային հող	+	-	87
Ավաղային քարքարոսակավահող	-	+	88
Մանր կալսավային հող	+	-	15
Ավաղային քարքարոսակավահող	-	+	20
Մանր կալսավային հող	+	-	30
Ավաղային քարքարոսակավահող	-	+	30
Մանր կալսավային հող	+	-	15
Ավաղային քարքարոսակավահող	-	+	26
Մանր կալսավային հող	+	-	10
Ավաղային քարքարոսակավահող	-	+	10
Մանր կալսավային հող	+	-	16
Ավաղային քարքարոսակավահող	-	+	16
Մանր կալսավային հող	+	-	18
Ավաղային քարքարոսակավահող	-	+	14
Մանր կալսավային հող	+	-	76
Ավաղային քարքարոսակավահող	-	+	60
Մանր կալսավային հող	+	-	83
Ավաղային քարքարոսակավահող	-	+	70
Խճավաղային կավահող	+	-	15
Խճաղ-սղահող	-	+	25
Խճահող	+	-	25
Խճահող	-	+	20
Խճահող	+	-	25
Խճահող	-	+	25
Խճահող	+	-	16
Խճահող	-	+	11
Խճահող	+	-	13
Խճահող	-	+	46
Խճահող	+	-	46
Խճահող	-	+	57
Սեահող	+	-	20
Սեահող	-	+	15
Սեահող	+	-	25
Սեահող	-	+	15
Սեահող	+	-	20
Սեահող	-	+	18
Սեահող	+	-	13
Սեահող	-	+	15
Սեահող	+	-	48
Սեահող	-	+	48
Քարքարոսա սեահող	+	-	15
Քարքարոսա սեահող	-	+	10
Քարքարոսա սեահող	+	-	20
Քարքարոսա սեահող	-	+	10
Քարքարոսա սեահող	+	-	18
Քարքարոսա սեահող	-	+	15
Քարքարոսա սեահող	+	-	15
Քարքարոսա սեահող	-	+	24
Քարքարոսա սեահող	+	-	12
Քարքարոսա սեահող	-	+	15
Քարքարոսա սեահող	+	-	50
Քարքարոսա սեահող	-	+	37
Քարքարոսա սեահող	+	-	55
Քարքարոսա սեահող	-	+	49

ոլողիական բնորոշ հատկությունները, որոնք ընդհանուր բիոլոգիական հարցերի լուսաբանման համար, անկասկած, մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

## ՊԱԼԱՐԻԿԱՆԵՐ

Մեր հետազոտությունների ժամանակ ամենից առաջ նկատվեց, որ Հայաստանի տարբեր հողա-կիմայական պայմաններում զարգացող առվույտների արմատային սիստեմներն իրարից խիստ տարբերվում են, հետևապես խիստ տարբերվում են նաև նրա վրա առաջացած պալարիկների կազմակերպման բնույթը, Այսպես, օրինակ՝ Լենինականի մշակովի-Շռովի սեահողային պայմաններում աճող առվույտն ունի բավականին ուժեղ զարգացած արմատային սիստեմ, այստեղ նաև տալիս է շատ խորը գնացող, ուղղաձիգ, հաստ զլիսավոր արմատ, որն իրենից արձակում է գլխավոր արմատին զուգահեռ գնացող երկրորդական զլիսավոր արմատները Հոգի վերին շերտից սկսած՝ մինչև 25—30 սմ տարածության վրա, երբեմն նաև 50—70 սմ լայնության վրա տալիս է ուժեղ ճյուղավորվող արմատային հավելվածներ, Վերջինիս սֆերայում առաջանում են մեծ քանակությամբ, հատկապես բարակ արմատա-մազմզուկների վրա երկարավուն. փոված, երբեմն պարզ ճյուղավորություններ տվող պալարիկներ, Այս ինչ նույն շրջանի մշակովի, սակայն անջրտի հողերում աճող առվույտը նախ տալիս է թույլ արմատային սիստեմ, ունի նույնական գնացող արմատներ, Առաջացնում է թույլ ճյուղավորություն ունեցող արմատային սիստեմ, որի վրա քիչ թվով են պալարիկներ կազմակերպվում:

Արարատյան դաշտավայրի ծանր կավային մշակովի ու ջրովի հողերում աճող առվույտը նույնպես տալիս է շատ խորը գնացող, հաստ զլիսավոր արմատ, որի երկարությունը երբեմն համառում է երկու մետրի. Տալիս է երկրորդական զլիսավոր արմատներ, բայց վերջիններիս քանակը նախ քիչ է և երկրորդ՝ խորը չեն թափանցում, տալիս են ճյուղավորումներ, Այստեղ արմատային սիստեմի ճյուղավորությունն այնքան ուժեղ չէ, որքան սեահողային պայմաններում. Արմատային մազմզուկների վրա նույնպես մեծ քանակությամբ կազմակերպվում են պալարիկներ, սակայն սրանց մեծությունը և ձևերը խիստ տարբերվում են առաջիններից, Վերջիններս ավելի կարճ են, հաստ և իրար վրա խմբված, որի հետևանքով վեր հն ածվում ճյուղավորվող պալարիկների. Այս շրջանում բոլորովին այլ պատկեր է նկատվում անջրդի և չմշակվող հողերում աճող առվույտների

մոտ դրանք նախ ունեն թույլ զարգացող արմատային սիստեմ, վերին շերտում ճյուղավորությունը շատ թույլ է, իսկ ներքին շերտում 20սմ-ից ցած կազմակերպվումէ փնջաձև արմատային սիստեմ, խորը գնացող մեկ զլիսավոր արմատով: Արմատի վրա քիչ պալարիկներ են գտնվում, նրանք էլ կենաքոնացած են վերին շերտի թույլ ճյուղավորություն ունեցող արմատային սիստեմում: Նախալեռնային շրջանի ջրովի և մշակովի խճա և ծանր կավային հողերում համարյա նույն պտտիկերն է նկատվում, ինչ որ Արարատյան զաշնավայրի հողերում, միայն այն տարբերությամբ, որ վերջիններս ավելի քան թույլ արմատային սիստեմ ունեն, այստեղ պալարիկները ցրված են և բարակ ու նիստ, առանց ճյուղավորությունների: Անջրդի քարքարոտ հողերում բույսերը շատ խղճուկ տեսք ունեն, թույլ արմատային սիստեմով: Նրանց վրա առաջացած պալարիկները շատ փոքր են, երբեմն սովորական աչքին հազիվ նկատելի: Լեռնային շրջաններում զարգացող առվույտի պատկերը համարյա նույնն է, ինչ որ լեռնինականի ջրովի և մշակովի հողերում զարգացող առվույտինը: Ինչպես տեսնում ենք, հողակիմայական պայմանների փոփոխությունը խիստ ազդում է ոչ միայն առվույտի արմատային սիստեմի կազմակերպման պրոցեսի, այլ նաև նրա արմատային սիստեմի ձևավորվող պալարիկների քանակի դասավորության և, որ կարենորն է, նրանց աճի վրա: Այդ բանն ավելի ցայտուն է արտահայտվում պալարիկների մեջ զարգացող պալարաբակտերիաների մորֆոլոգիական հատկանիշների վրա:

### ՊԱԼԱՐԱԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ ՄՈՐՖՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՌՎՈՒՅՑԸ ՊԱԼԱՐԻԿՆԵՐՈՒՄ

Եթե պալարիկները մշակովի և ջրովի հողերում առվույտի արմատների վրա ընդհանրապես շատ են և ունեն բազմապիսի ձևեր, ապա նրանց մեջ զարգացող պալարաբակտերիաներն իրենց զարգացման ընթացքում չեն տալիս առանձին բարդ ձևեր: Հատկապես սևահողերում նկատվում է, որ պալարիկների մեջ պալարաբակտերիաներն ունեն կարճ, հաստ ձողիկի ձև, շատ քիչ նկատվում են բակտերիոյիդ ձևեր: Վեգետացիայի տարբեր շրջաններում որոշ տարբերություն նկատվում է, օրինակ՝ պալարիկների մեջ զարնանը գնդաձև և կարճ ու հաստ ձողիկի ձև ունեցող բջիջներ ավելի շատ են, ծաղկման շրջանում գնդաձև բջիջ-

Ներն իսպառ բացակայում են, շատ են ձողաձև տեսակները, նրանք էլ գոտիավորված են, քիչ շատեն նաև ճյուղավորվող ձև ունեցող բջիջներ (բակտերիոֆիզներ): Անմշակ և չվոռոգվող հողերում աճող առվույտների պալարիկների մեջ հակառակ երկույթն է նկատվում: Այսպես, օրինակ՝ Կոտայքի քարքարոտ հողերում աճող առվույտի պալարիկների մեջ վեգետացիայի սկզբնական շրջանում, երբ կազմակերպվում են պալարիկներ, նրանց մեջ զարգացող պալարաբակտերիաներն ունեն բարակ և քիչ երկար ժամանակ կայուն են, միայն ծաղկման շրջանում են նրանք ճյուղավորվում: Ճյուղավորությունները մեծ մասամբ արտահայտվում են ծայրի մասերում, շատ քիչ են կողքի ճյուղավորությունները, վեգետացիայի վերջին շրջանում տալիս են գոտիավորվող, հաստ ձողաձև, մասսամբ էլ ձվաձև բջիջներ: Նույն շրջանում ջրովի և մշակովի հողերում նման ձեւեր քիչ են երկում, այստեղ էլ շատ են հաստ ձողաձև բջիջները ինչպես երկում է, հողի մշակումը և վեգետացիայի ընթացքում ջուր տալը խոշոր ազդեցություն է թողնում պալարիկների մեջ զարգացող պալարաբակտերիաների մորֆոլոգիական առանձնահատկությունների վրա: Այստեղ, անկասկած, մեծ նշանակություն ունի ավյալ հողի սննդանյութերի ռեժիմը: Նկատվում է, որ այն հողերը, որոնք հարուստ են սննդանյութերով (բացի ազուային նյութերից), այդտեղ աճող առվույտի պալարիկների մեջ զարգացող պալարաբակտերիաները կարճ և հաստ են, հետագայում գոտիավորվող ձեւի բջիջներով են հանդես գալիս, այն ինչ սննդանյութերով աղքատ հողերում նրանք տալիս են ձողաձև, բարակ (բակտերիոփիզ) ճյուղավորված ձեւի բջիջներ: Վերջիններս, ինչպես հետագայում կտեսնենք, ավելի վիրուկինտ են և ընդունակ՝ իրենց ձեւերն արագ փոփոխության ենթարկելով՝ ակտիվանալ:

### ԱՌՎՈՒՅՏԻ ՊԱԼԱՐԱԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ ԿՈՒԼՏՈՒՐԱԼ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տարբեր բարձրություններում, տարբեր բնույթի հողերում աճող առվույտների պալարիկներից մեր կողմից մեկուսացված պալարաբակտերիաների շտամերի մանրակրկիտ ուսումնասիրության ժամանակ նկատեցինք, որ նրանցից շատերը շատ ընդհանուր գծեր ունեն, զրա համար էլ որոշ սելեկցիոն աշխատանքներ:

կատարելուց հետո կանգ առանք առանձին հողակիմայական պայմաններից մեկուսացված պալարաբակտերիաների վրա, որոնք և հետադայում ավելի մանրամասն ուսումնասիրեցինք, ապա ցուցելու համար, թե զրանք իրենց վիրուլնությամբ, ակտիվությամբ, հետեւապես կուլտուրալ տրանժին հատկություններով իրարից ի՞նչով են տարբերվում: Մենք հատկապես կանգ առանք հետեւյալ շրջանների հողերից մեկուսացրած պալարաբակտերիաների ներքոնիշյալ շամաների վրա (տես աղյուսակ № 2):

Առանձին օրգաններից մեկուսացրած պալարաբակտերիաների  
օսամների բիգը

Աղյուսակ № 2

Շրջաններ	Պալարաբակտերիաների շտամները		Անմշակ և անջըր դի հող	
	Մ 2 ա կ ո վ է			
	Զբովի հող և շտամների №№	Անջրդի հող և շտամների №№		
Երկան	2—№ 1 և № 2	2—№ 3 և № 4	2—№ 5 և № 6	
Էջմիածին	2—№ 7 և № 8	2—№ 9 և № 10	2—№ 11 և № 12	
Հոկտեմբերյան	2—№ 13 և № 14	2—№ 15 և № 16	2—№ 17 և № 18	
Կոտայք	2—№ 19 և № 20	2—№ 21 և № 22	2—№ 23 և № 24	
Լեռինական	2—№ 25 և № 26	2—№ 27 և № 28	2—№ 29 և № 30	
Նոր Բայազետ	2—№ 31 և № 32	2—№ 33 և № 34	2—№ 35 և № 36	

Ինչպես ցույց են տալիս աղյուսակի տվյալները, մենք ամեն մի հողային տիպից մեկուսացված բազմաթիվ շտամներից ընտրել ենք երկուական շտամ, ընդամենը 36. Այդ 36 շտամի կուլտուրալ հատկանիշների ուսումնասիրությունը մեզ բերեց հետեւյալ ընդհանուր եղբակացության:

Երևանի մշակովի հողից մեկուսացված № 1 և № 2 շտամները, եթե իրար հետ համեմատում ենք, տեսնում ենք, որ այդ երկու շտամները կուլտուրալ հատկություններով իրարից խիստ տարբերվում են. № 1 շտամը, եթե տալիս է հարթ լորձունքութաղութ, իսկ № 2-ը կնճռավոր, համեմատաբար չոր գաղութով. Արհետական մննդանյութերի վրա № 1 շտամը—ձողաձեւ, հաստ, ավելի շատ և երկար բջիջներ է, իսկ № 2 շտամը ավելի շատ,

կարճ ու հաստ, հաճախ գոտկավորվող բջիջներ է տալիս. բակտերիի դիներ երկու դեպքում էլ համարյա սննդանյութերի վրա չի երևում: Ավելի ուժեղ վարակում են կնճռավորները, քան հարթերը, սակայն վերջիններս ավելի ակտիվ են, քան առաջինները: Մշակովի, սակայն անջրդի հողից թե գարնանը (№ 3) և թե աշնանը (№ 4) մեկուսացրած պալարաբակտերիաներն արհեստական սննդանյութերի վրա, այնպես, ինչպես № 1 № 2 շատամերն իրարից խիստ տարբերվող գաղութներ չեն տալիս, այդ երկուսն էլ առաջացնում են ուժեղ զարգացող ընդլայնսական լորձնոտ և հոսուն գաղութներ: Հատկապես լավ են զարգանում հողից ստացված էքստրակտ, մաննիտ և սախարոզային սննդանյութի վրա: Մորֆոլոգիական հատկանիշներով նույնպես նրանք իրարից չեն տարբերվում, երկու դեպքերում էլ սննդանյութի վրա զարգանալիս՝ կարճ ու բարակ ձողած բջիջների կողքին շատ են նաև բակտերիոդ ձեերը: Շատ քիչ կան նաև գոտկավորվող բջիջներ. նրանք էլ մեծ մասամբ առաջ են գալիս հին կուլտուրաներում:

Անջրդի և անմշակ հողերից մեկուսացրած պալարաբակտերիաներն արհեստական սննդանյութերի վրա իրենց կուլտուրալ և մորֆոլոգիական հատկանիշներով խիստ տարբերվում են նույն շրջանի մշակովի և ջրովի, անգամ անջրդի, սակայն մշակված հողերից մեկուսացրած պալարաբակտերիաներից: Նախ նրանք տալիս են ոչ հոսուն, քիչ գորշավուն գույնի կնճռավոր գաղութներ, բջիջները մեծ մասամբ շարժուն, բարակ, կարճ ձողիկներ են, չին կուլտուրաներում տալիս են հաստ, անշարժ, երսին ճյուղավորված, վերջում էլ գոտկավորվող բջիջներ, վերջինների շրջանում շատ են նաև փոքրիկ կոկկերի ձեր բջիջները: Ինչպես տեսնում ենք, այս տիպի պալտրաբակտերիաներն արհեստական, հատկապես լորու էքստրակտ-սախարոզային սննդանյութերի վրա զարգանալիս, իրենց մորֆոլոգիական ձեերն ավելի արագ փոփոխության ենթարկելով, առաջացնում են զարգացման տարբեր ստադիաներ: Նշանակում է, նրանք ավելի ճկուն են տարբեր սննդանյութերի վրա հարժարվելու տեսակետից: Ամենակարևորն այն է, որ ունեն բարձր վերուելնտություն և ակտիվություն:

Էջմիածնի և Հոկտեմբերիյան շրջանների մշակովի և ջրովի հողերում աճող առվույտներից մեկուսացված պալարաբակտերիաներն իրենց կուլտուրալ և մորֆոլոգիական հատկանիշներով համարյա նույն ձեր փոփոխություններ են առաջացնում, ինչպես

մենք նկատեցինք երեանի մշակովի ու ջրովի հողերից մեկուսացրած պալարաբակտերիաների մոտ, Նույնանման ձևեր են առաջցնում այդ շրջանների մշակովի, բայց անմշակ հողերից մեկուսացրած պալարաբակտերիաները, ինչ որ երեանի մշակովի, սակայն անջրդի հողերից մեկուսացրած պալարաբակտերիաները՝ Որոշ տարբերություն նկատվում է այդ շրջանների անջրդի ու անմշակ հողերում զարգացող առվույտներից մեկուսացրած պալարաբակտերիաների մոտ: Այդ տարբերություններն ավելի տկընայալ են աշնան՝ վեգետացիայի վիրջում անջատված պալարաբակտերիաները՝ վրա ունեն ավելի փոքր և շարժվող ձողիկի ձև ազարային պլաստինկայի վրա առաջացնում են մուգ-դիղնավուն գույնի լորձնոտ գաղութներ. հին կուլտուրաներում հաճախ տալիս են բակտերիոֆի ձևեր. սրանց կողքին նաև երկար պտուտակավոր, բարակ, երկար մազմղուկանման բջիջներ, վերջիններս կենտրոնական մասում ունեն կլորուն առանցք, որոնք հետո վեր են ածվում գլուղածերի և թե էջմիածնի և թե Հոկտեմբերյան շրջանների անջրդի և անմշակ հողերի պալարաբակտերիաների մոտ: Բոլորվին այլ կուլտուրալ և մորֆոլոգիական տուանձնահատկություններ ենք նկատում կոտայքի, Լինինականի և Նոր-Բայազետի շրջանների հողերում աճող առվույտներից մեկուսացրած պալարաբակտերիաների մոտ: Այսպես, օրինակ, կոտայքի շրջանի մշակովի ու ջրովի հողերում զարգացող առվույտի պալարիկներից մեկուսացրած պալարաբակտերիաներն արհեստական սննդանյութերի վրա նախ առաջացնում են մուգ գույնի ուժեղ կնճռավորություն տվող գաղութներ, որոնք բավականին ուսուցքավորում տալու հետ միասին՝ խիստ կտրտված եղբեր են տալիս, ապա այդ կտրտվածքները հետզետե լցվում են դարձյալ ծալքավոր լորձունքոտ մասսայով: Նման պրցես հատկապես լավ նկատվում է լորու էքստրակտ-սախարոզային սննդանյութի վրա: Հողի էքստրակտ-գլուկոզային սննդանյութերի վրա տալիս են պարզ թույլ գորշավուն գույնի, առանց կնճռավոր լորձունքոտ, հոսուն գաղութներ: Մուգ գույնի զաղութներ են տալիս հատկապես բույսի վեգետացիայի վերջում մեկուսացրած պալարաբակտերիաները: Մուգ գույնի կնճռավոր գաղութներում պալարաբակտերիաները սկզբում (Յ օրվա կուլտուրայի դեպքում) ունեն ըստ մեծի մասի երկար ու հաստ, շարժուն ձողիկի ձև, կան նաև 1—1,5 լ տրա-

մագծով կոկկաձև բջիջները Վերջիններս հետազայում շղթայագործում են Բակտերիոիդ ձևեր նույնպես տալիս են, սակայն ավելի ծերացած հասակում (20—25 օրվա կուլտուրաներում): Բակտերիոիդների ճյուղավորությունները մեծ մասամբ դիտումիկ ըլքնույթ են կրում, գոտկավորվող բջիջներ համարյա չեն տալիս: Ըսդհակառակը պարզ թույլ գորշավուն գույնի և առանց կնճըռավոր գաղութներում պալարաբակտերիաներն ունեն բարակ ու երկար շարժուն ձողիկների ձև, որոնք արագ տալիս են բակտերիոիդի ձև: Վերջիններիս ճյուղավորությունները մեծ մասամբ ծայրամասերում են լինում, գնդիկներ չեն տալիս: Հին կուլտուրաներում ձողիկները կարճանում, հաստանում և գոտկավորվում են: Վերջին գեպքում բջջի երկու ծայրերը սրանում են: Նույն շրջանի մշակովի, բայց անջրդի, ինչպես նաև անմշակ ու անջրդի հողերից մեկուսացրած առվույտի պալարաբակտերիաները արհետատական սննդանյութերի վրա թույլ են առնում, աճելիս էլ, հատկապես հողային էքստրակտ-մաննիտային սննդանյութի վրա, տալիս են չոր, քիչ ծալքավոր, հարթ եղբերով գաղութ:

Գաղութներում բջիջները կարճ ու բարակ, արագ շարժվող ձողիկների ձև ունեն. հին կուլտուրաներում վերջիններս երկարում, քիչ հաստանում և հատիկավորվում են: Այս գեպքում առաջ են գալիս նաև կարճ, թույլ ճյուղավորություն տվող բակտերիաներ, վերջին հատկանիշները հատկապես լավ նկատվում են վեգետացիայի վերջում մեկուսացրած պալարաբակտերիաների մոտ: Սյու ձեւի բակտերիաների նկատմամբ մեր նախնական դիտողությունները պարզում են, որ ավելի վիրուլենտ ու ակտիվ են, արհեստական վարակման գեպքում բույսի արմատների վրա շատ պալարիկներ են առաջացնում, պալարիկները կուլպակտ են, խիտ դասավորված ու տողած: Վարակման հետևանքով առվույտը անազոտ սննդատու միջավայրում ուժեղ աճ է տալիս: Ցածր լեռնային գոտում՝ լենինականի շրջանի հողերում զարգացող առվույտի պալարաբակտերիաներն արհեստական սննդանյութերի վրա զարգանալիս, խիստ փոփոխում են իրենց մորֆոլոգիական բնորոշ ձևերը: Այսպես, եթե նրանք բույսի պալարիկների մեջ ունեին ընդհանրապես կարճ ու հաստ ձողիկի ձև, ազարային սննդանյութի վրա դառնում են երկար, շարժուն ձողիկներ, գընդաձներ բոլորովին չեն տալիս: Միայն վեգետացիայի վերջում մեկուսացրած պալարաբակտերիաների շտամները երբեմն տալիս են էլիպսաձև բջիջներ, հաճախ՝ ճյուղավորություններով: Ագաւ-

զային մննդանյութերի վրա առաջացնում են կեղտոտ, սպիտակ գույշնի հոսուն ընդլայնական դաղութներ, կնճուավորում երբեք չեն տալիս, լավ փարթամ գաղութներ են առաջացնում հողային էքստրակտ-ստիճարողա ագարային պլաստինկայի վրա: Այստեղ էլ, ըստ կուլտուրայի հնացման, բակտերիաների բջիջները խիստ ձևավոխության են ենթարկվում: Եթե սկզբում զարգանալիս տալիս են երկար, հաստ բջիջներ, հետագայում դրանք բարակում են, բարակելու հետ նաև կտրատվում, դառնում են կարճ, հաստ ձողիկներ, որոնք նմանվում են էլիպսոիդի, սրանք հաճախ գոտիկավորվում և ապա ճյուղավորվում են և վերջում փոքրիկ գնդիկների են վերածվում:

Հակառակ պատկերն է ստացվում նույն շրջանի անմշակ հողերում զարգացող առվույտի պալարաբակտերիաների, այն էլ հատկապես վեգետացիայի վերջում մեկուսացված շտամների մոտ:

Սրանք ագարային մննդանյութերի վրա զարգանալիս տալիս են նախ գնդաձև բջիջներ, որոնք արագ ձևավոխվելով վեր են ածվում կարճ ու բարակ բջիջների և ապա հին կուլտուրաներում արդեն նոր միայն տալիս են ճյուղավորվություններ (բակտերիոֆիդների ձևի):

Արհեստական վարակման դեպքում առաջին խմբի, այսինքն՝ մշակովի և ջրովի սևահողերից մեկուսացած պալարաբակտերիաներն ավելի թույլ ակտիվություն և վիրուլինտություն են ցուցաբերում, քան վերջին խմբի պալարաբակտերիաների շտամները:

Լեռնային գոտու—Նոր-Բայաղետի շրջանների հողերում զարգացող առվույտի պալարաբակտերիաները նույնպես ունեն իրենց սպեցիֆիկ կողմերը: Ամենից առաջ նրանք բացառապես լավ են զարգանում հողային էքստրակտից պատրաստված արհեստական մննդանյութերի վրա: Վատ են աճում լորու խաշվածքից պատրաստված ագարային մննդանյութերի վրա: Բացի այդ ագարային մննդանյութերի վրա զարգանալիս էլ, սկզբում տալիս են խիստ խորդ ու բորթավոր գաղութներ, իսկ հետո այդ խորդությունը վերածվում է հարթ գաղութի—այն էլ հուսուն: Եթե գաղութը սկզբում պարզ գույն ունի, հետո հետը հետեւ գորշանում է, ապա գաղութի մեջ բջիջները նույնական իրենց ձևերն արագ փոփոխության են ենթարկվում: Սկզբում սիրին մեծություն (2—3μ×5.0,5γ) ունեցող ձողիկներն են, որոնք

կամաց-կամաց երկարում, հաստանում, գոտիկավորվում են, հետո տակիս են երկար ու բարակ թելանժան մազմղուկային բջիջներ: Այս խմբի շտամթերի ակտիվությունը և վիրուլինտությունը մի-ջակ է: Նույն շրջանի անջրդի հողերից մեկուսացրած պալարաբակտերիաները, արհեստական սննդանյութերի վրա նման խիստ արտահայտված ձեռփոխություններ չեն տալիս, վերջիններս ընդհանրապես կարճ շարժուն ձողիկներ են, միայն հնացած կուլտուրաներում երբեմն վերածվում են բակտերիոֆիզների: Սակայն իրենց ակտիվությամբ ու վիրուլինտությամբ ավելի բարձր ցուցանիշներ ունեն: Մնացած կուլտուրալ հատկանիշներով համարյա նույնն են, ինչ որ լենինականի անջրդի հողերից մեկուսացրած պալարաբակտերիաները:

Ինչպես այս նախնական դիտողություններից տեսնում ենք, Հայաստանի էկոլոգիական ֆակտորները մեծ ազդեցություն են թողնում առվույտի պալարաբակտերիաների մօրֆոլոգիական և կուլտուրալ հատկությունների ձևավորման պրոցեսի վրա:

Մեր այս նախնական դիտողությունների տվյալներն ի մի ամփոփելով, կարող ենք հանգել հետեւյալ եղբակացություններին:

1. Մշակովի ու ջրովի սևահողերում, եթե առվույտը տակիս է լավ զարգացած արմատային սիստեմ և ունի շատ նուրբ ու թույլ մազմղուկավոր արմատներ, նրանց վրա առաջանում են բավականին շատ պալարիկներ, որոնց մեջ պալարաբակտերիաներն ըստ մեծի մասի ունեն կարճ ու հաստ ձողիկի ձև: Վեգետացիայի ընթացքում նրանք շատ քիչ են փոփոխության ենթարկվում, այն ինչ արհեստական սննդանյութերի վրա նրանք խիստ փոփոխում են իրենց ձևերը: Թույլ ակտիվություն և վիրուլինտություն ունեն:

2. Մշակովի և ջրովի ծանր կավահողերում, երբ առվույտը նույնպիս տակիս է լավ զարգացած արմատային սիստեմ, պալարաբակտերիաները նույնպես ունեն հաստ ձողիկի ձև, միայն այստեղ, վեգետացիայի ընթացքում նրանք պալարիկների մեջ իրենց ձևերը փոխելով՝ տակիս են շատ ճյուղավորվող բակտերիոֆիզ ձևեր: Արհեստական սննդանյութերի վրա, նրանք սկզբում եղած ձողիկի ձևն արագ վերածում են բարակ բջիջների, հետո գոտկավորվող ձևերի և ապա գնդաձև բջիջների թույլ վիրուլինտություն և ակտիվություն ունեն:

3. Մշակովի ու ջրովի նախալեռնային գոտու քարքարու-

կավահողերում աճող առվույտը, եթե թույլ զարգացող արմատաւ-  
յին սիստեմ ունի և պալարիկներ քիչ են կազմակերպվում ու  
խիստ ցրված են, ապա պալարաբարակտերիաները պալարիկներում  
բարակ ու քիչ երկարուն ձևեր ունեն, զնդաձները համարյա բա-  
ցակայում են, միայն բույսի ծաղկման շրջանում նրանք ճյուղա-  
վորվում, իսկ վեգետացիայի վերջում՝ գոտկավորվում են. Ընդ-  
հակառակը, երբ այդ պալարաբարակտերիաները զարգանում են ար-  
հետական սննդանյութերի վրա, տալիս են ուժեղ աճ, որի ըն-  
թացքում նրանք տալիս են խիստ արտգ փոփոխվող մորֆոլո-  
գիական ձևեր, ունեն մեծ ակտիվություն և ուժեղ վիրուլենտու-  
թյուն:

4. Տարբեր բարձրության վրա գտնվող գոտիների անմշակ  
ու անջրդի հողերում աճող առվույտի արմատային սիստեմը  
նույն շրջանի մշակովի հողերում աճող առվույտի պալարաբար-  
տերիաների նկատմամբ ունեցած գանազանության հետ, պալարա-  
բարակտերիաների մորֆոլոգիական ու կուլտուրալ հատկանիշների  
մեջ նաև խիստ տարբերություն է նկատվում:

Նման հողերում զարգացող պալարաբարակտերիաներն ավելի  
ակտիվ են գործում արհետական սննդանյութերի վրա, բարձր  
ակտիվություն և վիրուլենտություն ունեն:

5. Հողի մշակման ժամանակ խոնավության աստիճանը  
նույնպես խորը փոփոխություն է առաջացնում պալարաբարակտե-  
րիաների բիոլոգիական և մորֆոլոգիական առանձնահատկու-  
թյունների վրա:

6. Հայաստանի հողակլիմայական պայմանները խորը կնիք  
են թողնում ոչ միայն բույսերի զարգացման, այլ նաև պալարա-  
բակտերիաների գործունեության վրա: Այդ տեսակետից էլ ավե-  
լի քան անհրաժեշտ է դառնում այդ էկոլոգիական ֆուկտորների  
ազդեցության ուսումնասիրությունը, որը մեզ հետագայում հնա-  
րավորություն է ընձեռելու օրդանիզմների զարգացման մեխա-  
նիզմի իր ամբողջությամբ պարզել: Իսկ այդ ոչ միայն տեսա-  
կան, այլ և գործնական խոշոր նշանակություն կարող է ունե-  
նալ:

А. К. ПАНОСЯН

## Влияние экологических факторов на некоторые биологические особенности клубеньковых бактерий люцерны

(Предварительное сообщение)

Разнообразие почвенно-климатических условий Армении отражается не только на развитии и оформлении растений, но также оказывает большое влияние на морфологические свойства и жизненные процессы поселившихся в этих почвах микроорганизмов. Проведенные нами за последние годы исследования морфологических и культуральных свойств культурных и диких люцерн привели к следующим предварительным выводам:

1. В обрабатываемых и поливных черноземах, при хорошем развитии корневой системы люцерны с нежными и покрытыми небольшим количеством волосков корнями, на них появляется большое количество клубеньков с клубеньковыми бактериями, имеющими в большинстве форму короткой и толстой палочки.

При вегетации изменчивость их незначительна. На искусственных же средах форма их значительно изменяется. Обладают слабой активностью и вирулентностью.

2. В обрабатываемых поливных тяжелых суглинках, при образовании также хорошо развитой корневой системы, клубеньковые бактерии имеют форму толстой палочки, однако во время вегетации они в клубеньках изменяются и дают форму сильно разветвленного бактериоида. На искусственных средах они из первоначально толстых палочек превращаются в тонкие палочки, затем опоясывающиеся виды и, наконец, шарообразную клетку.

Обладают слабой вирулентностью и активностью.

3. В обрабатываемых поливных каменистых сушилках предгорной зоны, при слабом развитии корневой системы, наблюдается слабое образование сильно разбросанных клубеньков. Клубеньковые бактерии имеют удлиненную форму, шарообразные формы почти отсутствуют, лишь в период цветения растения они разветвляются а к концу ве-

тетации опоясываются. Наоборот, при развитии их на искусственных питательных средах, дают сильный рост и при этом образуют сильно изменяющиеся морфологические виды. Обладают большой активностью и вирулентностью.

4. Наряду с различным ростом корневой системы люцерны необрабатываемых и неполивных почв зон различных высот, наблюдается также различие морфологических и культуральных свойств клубеньковых бактерий по сравнению с клубеньковыми бактериями поливных почв того же района. Наблюдается более активное развитие клубеньковых бактерий в подобных почвах. На искусственных питательных средах проявляют большую изменчивость, а также имеют большую активность и вирулентность.

5. Степень влажности при обработке почв вызывает глубокие изменения биологических и морфологических особенностей клубеньковых бактерий.

6. Почвенно-климатические условия Армении отражаются не только на развитии растений, но и на жизнедеятельности клубеньковых бактерий. С этой точки зрения изучение влияния экологических факторов, которое поможет в дальнейшем полностью выяснить механизм развития организмов, более, чем необходимо. Это изучение может иметь крупное теоретическое и практическое значение.

H. K. Panossian

## The Influence of Ecological Factors on some of the Biological Characters of the Alfalfa Nodule-Bacteria

### Summary

Our experiments specially carried on in order to investigate the morphological and cultural characters of both cultivated and wild alfalfa nodule bacteria have lead us to the following preliminary conclusions:

1. Of alfalfa, grown in cultivated and irrigated humus-soll, has a well developed root system and has very thin, weak and tiny hairroots, then upon them, there are produced

quite many nodules and the nodule-bacteria within them are rather short and thick rod-shaped. During the vegetative growth they are subjected to a very little change, although in artificial food medium their forms are greatly changed and have lower activity and virulence.

2. On cultivated and irrigated heavy clay-soils, when the alfalfa develops a well grown root-system, the nodule-bacteria similarly are thick rod-shaped, with the difference that in this case during the vegetative growth the nodule-bacteria changing their forms are giving very branched bacteroid forms.

In the artificial food medium, they quickly change their former thick rod-shaped forms into a thin rod-shape and afterward they are belted (beginning of cells division) and then into spherical forms. They have lower activity and virulence.

3. If the alfalfa grown in the cultivated and irrigated stony clay soils of submountainous zone, has eacker root-system and the nodules are fewer and very scattered, then the nodule-bacteria have a thin and somewhat longer shapex. The spherical forms are almost absent. Only at the flowering time of the plant they are branched and at the end of the vegetation period there begins belt-formation. On the contrary if those nodule-bacteria are developed in artificial foodmedium, they grow quite well and produce morphological forms which are changed rather quickly. At the same time they have a great activity and strong virulence.

4. The alfalfa grown in the uncultivated and unirrigated soils in the zones of various sea-levels, have different root-system. As to the morphological and cultural characters of the nodule bacteria, there is a wide difference when compared with the nodule-bacteria of alfalfa grown in the cultivated soils of the same region.

The nodule-bacteria developed in such soils, when grown in artificial food medium are more active and virulent.

5. The humidity of the soil at the time of its cultivation, also causes a deep change in the biological and morphological characters of the nodule-bacteria.

6. The soil and climatic conditions existing in Armenia,

are deeply influencing not only the plant development, but also the activity of nodule-bacteria. From this view point it is rather necessary to investigate the effects of these ecological factors, which enable us fully to understand the mechanism of the development of the organisms. Such an investigation may bee not only of theoretical but also af great practical importance.